

**Մարդկային փոխհարաբերություններում մշակույթի դրսևորումը Մարկ Լևիի «Պարոն Դալդրիի տարօրինակ ճամփորդությունը» վեպում և հայերեն թարգմանությունում**

*Հոդվածում անդրադարձել ենք թարգմանության դերին մշակույթների զարգացման և փոխներթափանցման գործում՝ առանձնացնելով մարդկային փոխհարաբերություններում առկա մշակույթը (տվյալ դեպքում անգլիական և թուրքական իրականություններում), քանի որ թարգմանությունը, լինելով մշակութային երևույթ, նպաստում է ազգային մշակույթի զարգացմանը: Գիտակցելով, որ վեպի հերոսները հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներ են, փորձել ենք հնարավորինս հավատարիմ մնալ բնագրին՝ հայ ընթերցողին ամբողջական ներկայացնելու համար վեպում առկա փոխհարաբերությունների մշակույթը:*

*Բանալի բառեր.բազմամշակութային, բազմաէթնիկ, հանդուրժող և քաղաքակիրթ աշխարհ, համամարդկային արժեքներ, նյութական և հոգևոր մշակույթ, կենցաղավարության մշակույթ:*

Մ. Լևին ժամանակակից ֆրանսիացի հայտնի և ամենաշատ ընթերցված հեղինակներից է ոչ միայն Ֆրանսիայում, այլև ամբողջ աշխարհում: Նրա 14 վեպերը թարգմանվել են 45 լեզվով և տպագրվել 30 միլիոն օրինակով: Մ. Լևին ծնվել է 1961 թ. Ֆրանսիայում: Նա գրչի մարդ է դարձել բավականին ուշ, երբ քառասուն տարեկան էր: Երկար երեկոներին, քնելուց առաջ որդուն իր հորինած պատմություններն էր պատմում: Քրոջ խորհրդով դրանցից մեկը թղթին հանձնեց ու վերնագրեց «Եթե դա ճիշտ էր», որն էլ դարձավ նրա առաջին վեպը: Այն շատ լավ ընդունվեց ընթերցասեր հասարակության կողմից և էկրանավորվեց: Ավելի ուշ Լևին տեղափոխվեց Լոնդոն և ամբողջությամբ նվիրվեց գրականությանը: Հարցազրույցներից մեկում ասել է. Ցանկանում եմ, որ որդիս մեծանա հենց այսպիսի բազմամշակութային, բազմաէթնիկ, հանդուրժող և քաղաքակիրթ աշխարհում:

Մ. Լևին ոչ մի գրական ուղղության չի պատկանում: Նա ռոմանտիկ ոճով գեղեցիկ, հուզիչ պատմություններ է պատմում՝ առաջ քաշելով համամարդկային արժեքներ ինչպիսիք են սերը, հավատարմությունը, բարեկամությունը, նվիրվածությունը, ազատությունը, երջանկության փնտրտուքը:

Սեղմ ոճով այդպիսի պատմություն է հյուսել Մ. Լևին 2011 թվականին և անվանել է «Պարոն Դալդրիի տարօրինակ ճամփորդությունը»: Սա մի վեպ է գեղեցիկ սիրո, ինքնափնտրման, ինքնաճանաչման մասին:

Վեպը շատ հետաքրքիր ֆաբուլայով է սկսվում: Շրջիկ տոնավաճառում, ուր Ալիսը զվարճանալու էր գնացել իր ընկերների հետ Սուրբ ծննդյան նախօրեին, մի բախտագուշակ կին նրան ասում է, որ իր կյանքի ամենակարևոր տղամարդը մի քանի վայրկյաններ առաջ անցել է իր ետևից: Սակայն նրան հանդիպելու համար Ալիսը պետք է երկար ճամփորդություն կատարի և հանդիպի վեց անձնավորության, որոնք էլ նրան կառաջնորդեն դեպի իր ճակատագիրը: Սակայն բախտագուշակը զգուշացնում է, որ ճամփորդության ավարտին իր իմացած իրականությունը կանենա: Նրա հարևան Դալդրին համոզում է կատարել այդ ճամփորդությունը, որի շնորհիվ Ալիսը բացահայտում է իր կյանքի պատմության մի ժամանակահատված, որի մասին բացարձակապես անտեղյակ է եղել:

Վեպի երկու գլխավոր հերոսները՝ Դալդրին և Ալիսը կիրթ, զգայուն, խորը ներաշխարհով, դաստիարակված անձնավորություններ են: Դալդրին բրթբրթան բնավորությամբ նկարիչ է, որը սիրում է մենակյաց կյանքը և նյարդայնանում է, երբ իրեն անհանգստացնում են: Մինչդեռ նկարում է խաչմերուկներ, որտեղ բազմամարդ է, ուր խաչվում են մեքենաները, մարդիկ՝ իրենց բազմերանգ էությամբ ու տրամադրությամբ, որոնցից ոչ մի մանրուք նրա խորաթափանց հայացքից չի վրիպում: Նա ազնիվ է, իսկական ջենտլմեն ու արվեստագետ, որն ընդունակ է մեծ սիրո ու զոհաբերության:

Ալիսը օժանագործ է, ինչպես վեպում է ասվում՝ քիթ է՝ որն օժտված է ստեղծագործական էությունը և մեծ ցանկություն ունի կատարելագործվել և նոր խոսք ասել իր մասնագիտության մեջ: Նա էլ Դալդրիի նման տառապում է միայնությունից և ընդունակ է գնալ իր երջանկության հետևից:

Որոշ քննադատներ նրա գրիչը պարզունակ են համարում, որիշները գտնում են, որ ոչինչ չի պակասում նրա գրչին՝ մանկություն, սեր, ընկերություն, ավելացրած մի պտղունց հումոր: Կարծում ենք, որ նրա գրիչը ոչ թե պարզունակ է, այլ պարզ, ինչը հաստուկ է վարպետներին: Նա անհատի, մարդու ջատագովն է: Վեպն ունի ներքին մեծ ազատություն, որը ձևավորվում է կերպարների միջոցով: Գրեթե բոլոր կերպարները, բացի Ջանի հորաքրոջից (դա էլ թվացյալ է) հարգում են մյուսների ազատությունը և նույնիսկ փորձ չեն անում սահմանն անցնել, բռնանալ դիմացինի վրա: Հերոսների ներքին ազատությունն ապրելակերպ է, կենսակերպ, այլ ոչ՝ քարոզություն: Մեծ մաշտաբով «Պարոն Դալդրիի տարօրինակ ճամփորդությունը» վեպը մի ստեղծագործություն է, որը դատապարտում է մարդկանց ճակատագրերը խեղաթյուրող բռնությունը, որը գրքում արտահայտվում է երկրորդ համաշխարհային պատերազմի թողած ողբերգությունների հիշողություններով և հայկական եղեռնի անաչառ ու ճիշտ նկարագրությամբ, որոնց ուղղակի ականատեսն ու կրողն է վեպի գլխավոր հերոսուհին՝ Ալիսը:

Կցանկանայինք կանգ առնել վեպի հերոսների վարքագծում դրսևորված բարձր մշակույթի և դրա թարգմանության վրա:

Մշակույթ բառն ունի լատինական ծագում՝ *cultura*, որն սկզբնական շրջանում նշանակել է հողի մշակում՝ մարդու կարիքները բավարարելու համար: Մակայն ժամանակի ընթացքում մշակույթ բառը ձեռք է բերել մեկ նոր իմաստ ևս՝ մշակել մարդուն, այսինքն՝ հոգին, միտքը և կատարելագործել նրա ընդունակությունները: Հոգու մշակում տերմինն առաջին անգամ օգտագործում է հին հռոմեացի փիլիսոփա և հռետոր Կիկերոնը (մ.թ.ա. 106-43): Այդ հասկացությունը զարգացում ապրելով ավելի լայն ընդգրկում է ստացել: Մշակույթը ընդգրկում է ոչ միայն գործունեության առարկայական արդյունքները (արվեստի ստեղծագործություններ, մեքենաներ, տեխնիկա, կացարաններ, իրավունքի և բարոյականության նորմեր և այլն) այլև սուբյեկտիվ՝ մարդկային ուժերն ու ընդունակությունները, որոնք իրականացվում են գործունեության մեջ (գիտելիքներ, ունակություններ, արտադրական և մասնագիտական հմտություններ, աշխարհայայացք և այլն):

Մշակույթը հասարակության և մարդու զարգացման որոշակի մակարդակ է, որն արտահայտվում է մարդկանց գործունեության և կյանքի կազմակերպման ձևերով և տիպերով:

Մշակույթը բաժանվում է նյութականի և հոգևորի: Նյութականը ընդգրկում է ողջ նյութական գործունեությու-

նը և նրա արդյունքները: Հոգևոր մշակույթը ընդգրկում է գիտակցությունը, հոգևոր արտադրության ոլորտը: Թարգմանությունը հոգևոր մշակույթի դրսևորման ամենահին և կարևորագույն տեսակներից մեկն է: Հասկապես կարևոր է այն հանգամանքը, որ այն մի կողմից օգնում է ազգերի ուղղակի շփմանը, մյուս կողմից իր մեծ նպաստն է բերում ազգային մշակույթի ձևավորման գործընթացին՝ հարստացնելով այն մյուս ազգերի ձեռքբերումների շնորհիվ: Այդ իսկ պատճառով թարգմանության պատմությունն ինչ որ առումով կարելի է համարել ազգային մշակույթների, նրանց փոխազդեցության և զարգացման պատմություն: Թարգմանությունը ոչ միայն լեզուների փոխազդեցություն է, այլ նաև մշակույթների, որոնց փոխանցումն ու փոխազդեցությունը կատարվում է թարգմանչի շնորհիվ: Անվիճելի է, որ թարգմանությունը միայն լեզվական գործընթաց չէ: Քննելով նրա լեզվաբանական հիմքերը և դրանց դերը կարևորելով, միաժամանակ պետք է այն դիտարկել որպես մշակութային երևույթ, ազգային մշակույթի զարգացման կարևորագույն գործոն, հետևաբար՝ ազդգային մշակույթի մաս:

Այս սկզբունքով ցանկանում ենք սույն հոդվածում մեկնաբանել մարդկային փոխհարաբերությունների մշակույթը՝ դրսևորված Մարկ Լևիի «Պարոն Դալդրիի տարօրինակ ճամփորդությունը» վեպում: Հասկանալի է, որ այն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրեր: Օբյեկտիվ, քանի որ ներկայացնում է անցյալ դարի 50-ական թվականների Անգլիան, այնուհետև՝ Թուրքիան, իրենց մտածելակերպով, մարդկային փոխհարաբերությունների որակով, զգա-

յական աշխարհով: Սուբյեկտիվ, քանի որ այդ ամենն ան-  
ցնում է հեղինակի, այս դեպքում Մ. Լևիի՝ աշխարհընկալ-  
ման պրիզմայով, որտեղ հարգանքը մարդու հանդեպ ամե-  
նակարևոր մարդկային որակներից է, լինի առաջադեմ  
Անգլիայում, թե եղեռն իրականացրած, հետամնաց Թուր-  
քիայում: Հասկանալի է, որ Լևին կերտելով այդպիսի դրա-  
կան կերպարներ աշխարհն ավելի բարի, հանդուրժող, բո-  
նությունից ձերբազատված տեսնելու իր միտումն է արտա-  
հայտում: Թարգմանության ժամանակ փորձել ենք հավա-  
տարիմ մնալ հեղինակի նպատակին և հնարավորինս փո-  
խանցել վեպի արժեքները:

Վեպի սկզբից, երբ հերոսները նոր են սկսում հարա-  
բերվել, մինչև ավարտը, երբ միասին երկար ճամփորդու-  
թյուն են կատարել, բացահայտել են միմյանց, վերջապես  
համարձակություն են ունեցել խոստովանել, որ հենց հան-  
դիպման հենց առաջին պահից զգացմունք է առաջացել մի-  
մյանց հանդեպ, նրանք շարունակում են դուրք-ով խոսել:  
Հայկական կենցաղավարության մշակույթում կիրառելի չէ  
մտերիմ ընկերների շրջանում դուրք-ով դիմել: Չնայած այն  
հանգամանքին, որ թարգմանաբանության մեջ կարևորվում  
է տեքստը ընթերցողին ավելի հարազատ դարձնելու հա-  
մար նրա մենթալիտետին մոտեցնելը, սակայն գիտակցե-  
լով, որ դա անգլիական մշակույթի տարր է, պահպանել ենք  
այն թարգմանության մեջ, քանզի թարգմանությունը նաև  
մշակույթի փոխանցող է:

– *Depuis quand? demanda Alice.*

– *Daldry inspira profondément.*

– *Depuis le premier jour que vous êtes entrée dans cette maison, depuis la première fois où je vous ai vue monter cet escalier, et le trouble n'a pas cessé d'empirer.*

– *Si vous aviez des sentiments pour moi, pourquoi avoir tout fait pour m'éloigner de vous? Ce voyage à Istambul, c'était bien pour vous éloigner de moi, n'est-ce pas?*

– Երբվանի՞ց է, – հարցրեց Ալիսը:

Դարդիին խորը շունչ քաշեց:

– Առաջին օրից, որ մտաք այս շենք, առաջին անգամից, երբ ձեզ տեսա աստիճաններով բարձրանալիս այդ խռովքը չի դադարել խորանալ իմ հոգում:

– Եթե իմ հանդեպ զգացմունքներ ունեք, ապա ինչո՞ւ եք ամեն ինչ անում ձեզնից հեռացնելու համար: Մտամբույյան այդ ճամփորդությունն արեցիք այդ նպատակով, այնպե՞ս չի:

Մարդկային փոխհարաբերություններում հաջորդ մոտեցումը, որը կարմիր թելի պես անցնում է Մ. Լևիի վեպում, դա հարգանքն է դիմացինի մտածելակերպի, վարքագծի, զգացմունքների հանդեպ:

*Et, fixant toujours Daldry dans le miroir, elle lui demanda conseil pour annoncer à ses amis la décision qu'elle venait de prendre. Daldry réfléchit un instant et lui fit remarquer que la réponse se trouvait dans la question. Il suffirait*



*de leur dire qu'elle avait pris la décision qui la rendait heureuse: si c'étaient de vrais amis, ils ne pourraient que l'encourager.*

*Եվ շարունակ Դալդրիին հայելու մեջ նայելով, նրանից խորհուրդ հարցրեց, թե ինչպես հայտնի ընկերներին որոշման մասին: Դալդրին մի վայրկյան մտածելուց հետո նկատեց, որ պատասխանը հարցի մեջ է: Բավական կլինի ասել, որ որոշում է կայացրել, որը նրան երջանկացնելու է: **Եթե իսկական ընկերներ են, ապա միայն կքաջալերեն:***

Քանի որ վեպը սիրո մասին է, բնականաբար, սիրելու մշակույթը ևս իր վրա է կրում Մ. Լևիի մոտեցումն ու հոգեբանությունը: Հեղինակին հաջողվել է կերտել բարձր հոգևոր կերտվածքի տեր հերոսի (հանձինս Դալդրիի), որը չի բռնանում սիրած էակի *զգացմունքների վրա, այլ վահանում է նրան ցավ պատճառելուց և պատրաստ է տանջվել, բայց չցավեցնել սիրելիին, քանի որ համոզված չէ, որ ընդունակ է երջանկացնել սիրած էակին: Այդ որակը Լևին ստանում է հերոսի արարքների շնորհիվ, այլ ոչ՝ երկարբարակ սիրային տվայտանքների, խոստովանությունների, մերժումների նկարագրությամբ: Լևին իր վեպով հավաստում է, որ սերը գործնական քայլերում, վարքագծում դրսևորված զգացմունք է: Պարոն Դալդրիի տարօրինակ ճամփորդությունը՝ վեպում շատ բանաստեղծականություն ևս:*

*Vous n'imaginez pas ce que cela représente pour un homme qui a reçu mon éducation de se rendre compte qu'il est en train de devenir fou d'amour. De toute ma vie, je n'avais jamais craint quelqu'un comme je vous ai crainte. L'idée de vous aimer autant me faisait plus que jamais de redouter de ressembler à mon père,*

*et pour rien au monde je n'aurais imposé pareille peine à la femme que j'aime. Je vous serais particulièrement reconnaissant d'oublier sur- le - champ tout ce que je viens de vous dire.*

*Ձեք կարող պատկերացնել, թե ինչ է նշանակում տղամարդու համար, որ ստացել է իմ դաստիարակությունը, գիտակցել, որ խենթի նման սիրահարվել է: Ամբողջ կյանքում ոչ ոքից այնքան չեմ վախեցել, որքան ձեզնից եմ վախենում: Ձեզ սիրելու միտքն, ինձ ավելի քան երբևէ, վախեցնում էր: Հորս նման եմ և աշխարհում ոչ մի բանի համար չեի կարող նույնպիսի տատապանք պատճառել այն կնոջը, որին սիրում եմ: Առանձնակի երախտապարտ կլինեմ, եթե անմիջապես մոռանաք այն ինչ քիչ առաջ ասացի:*

### **Գրականության ցանկ**

1. Հասմիկ Բաղդասարյան, Թարգմանության ներածություն, Երևան, Ասողիկ, 2007
2. Նվարդ Վարդանյան, Թարգմանչական արվեստ. տեսական և գործնական ուսումնասիրություններ, Երևան, Վարդ Հրատ, 2011
3. Լևի Մ., Պարոն Դարդիի տարօրինակ ճամփորդությունը, Երևան, Անտարես, 2014
4. Guidère M , Introduction à la traductologie, Bruxelles, Groupe de Boeck, 2008
5. Lévy M, L'étrange voyage de Monsieur Daldry, Paris, Gallimard, 2011

**Проявление культуры в человеческих взаимоотношениях в романе М.Леви «Странное путешествие господина Далдри» и его армянском переводе**

*В статье прослеживается роль перевода, как решающего фактора в развитии и взаимопроникновении двух культур, в основе которого лежит взаимоотношение между людьми (в данном случае между англичанами и турками).*

*Принимая во внимание тот факт, что герои романа являются представителями разных слоев общества, мы попытались во время осуществления перевода приблизиться к оригиналу и всецело представить культуру взаимоотношений в романе армянскому читателю.*

*Ключевые слова:*

*многокультурный, многоэтнический, цивилизованный мир, общечеловеческие ценности, культура образа жизни, уважение и толерантность к культуре другого народа.*

**Culture Manifestation in Human Relations in M.Levy's  
Novel "The Strange Journey of Mr. Daldry" and  
Its Armenian Translation**

*The present article touches upon the role of translation in the process of the development and interpenetration of cultures pointing out the culture existing in human relations (in English-Turkish relations) as translation is a cultural phenomenon, a significant factor for developing national culture. Taking into consideration the fact that the characters of the book are representatives of different classes of the society we have tried to be as faithful to the original as possible to give a complete description of the culture of the relations in the book to the Armenian reader.*

*Key words: multicultural, multiethnic, tolerant and civilized world, universal values, material and spiritual culture, household culture.*